


Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարար



Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի ժամանակավոր
պաշտոնակատար

Ա. Ալավերդյան
07 հունիսի 2011 թ. N 28

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<< Լիցենզավորման մասին >> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին >> ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-227-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) <<Լիցենզավորման մասին >> ՀՀ 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը շարադրվել է նոր խմբագրությամբ: <<Լիցենզավորման մասին >> ՀՀ 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի <<17.Քաղաքաշինության բնագավառ >> բաժնի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները բաժանված էին հինգ քաղաքաշինական ոլորտների: Դրանք են՝

1) բնակելի (բացառությամբ ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող անհատական բնակելի տների, ավտոտնակների, օժանդակ շինությունների, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների), հասարակական եւ արտադրական (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների),

- 2) տրանսպորտային,
- 3) հիդրոտեխնիկական,



4) էներգետիկ,

5) կապի:

<< Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-227-Ն օրենքում ըստ քաղաքաշինական ոլորտների տարանջատումներ չեն սահմանվել: Քաղաքաշինական ոլորտների վերաբերյալ համապատասխան նշումներ, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, կատարվում է լիցենզիայի ներդիրում: Ընդ որում լիցենզիա ստանալու նպատակով անձինք կարող են դիմել ինչպես նշված բոլոր ոլորտների, այնպես էլ դրանցից մի քանիսի կամ յուրաքանչյուրի համար:

Առկա իրավիճակում տարաբնույթ է ընկալվում <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ կետով սահմանված քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափերի հարցը:

<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն և հաշվի առնելով վերը նշվածը, պաշտոնապես պարզաբանում են.

Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է նկատի ունենալով հայցվող քաղաքաշինական ոլորտների ներդիրների քանակը՝ հայցվող յուրաքանչյուր ոլորտի համար լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափը բաժանած հինգի:

